

կերտուհիներին իրանց մայրենի լեզուով՝ դասաւանդուի կրօնը
առաջիկայ ուսումնական տարեշրջանի սկզբից:

Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.

„Զական. Օծոքքնիւ լրագրի խմբագիր-հրատարակիչ
Ֆէոդորովին թոյլ է արուած նոյն անունով պարսկերէն մի լրա-
գիր հրատարակել Ասիաբաղում: Այդ լրագրի նպատակը կը լինի
նպատել ուսու-պարսկական յարաբերութիւնների զարգացման:
Պարսկերէն լրագիրը սկզբում՝ լոյս կը տեսնի այն չափով, որ
չափով նիւթեր կը հաւաքուեն, բայց մի ամսուայ ընթացքում
4 անգամից ոչ պակաս: Ապագայում լրագիրը կը դառնայ ամե-
նորեայ: Առաջին համարը լոյս կը տեսնի այս տարուայ յունիսի
1-ին:

Ապրիլի 28-ին ներքին գործերի մինիստրը որոշեց ասացին
նախազգուշացում յայտնել „Պրաօ“ և „Վօչօդէ“ լրագիրնե-
րին՝ նրանց վեասակար ուղղութեան պատճառով:

Մայիսի 16-ին „Վօչօդէ“ ստացել է երկրորդ նախազգու-
չութիւն:

Մայիսի 12-ին արգելուած է „Զնամյ“ թերթի հատով վա-
ճառումը:

Երջանային դատարանը Քիշինեւում „Բեսսարաբեց“ թեր-
թի հրատարակութեան իրաւունքը գնուեց Մալոկու օգաֆին՝ հե-
ռացնելով Կրուշեանին լրագրի հրատարակութիւնից:

Ներքին գործերի մինիստրը նորից թոյլապրեց „Նովости“
և „Զնամյ“ լրագիրների հատով վաճառումը:

Մայիսի 5-ին նորից թոյլապրուած է „Новое Время“-ի
հատով վաճառումը:

Նախաշգուշութիւն է արուած Ֆինլանդիայում լոյս տեսնող
«Helsingfors posten» թերթին,

Թոյլապրուած է Վ. Մեշերսկուն (Гражданинъ-ի խմբա-
գիր-հրատարակչին) հրատարակել շարաթը մի անգամ հանրա-
մատչելի „Дружескія Рѣчи“ թերթը:

Պետերբուրգում „Гласность“ լրագրի իրաւունքը անցնում
է Ա. Սուվորինին, որին թոյլապրուած է „Гласность“ անունը
փոխարինել „Русь“ անունով:

Օբէնողրութիւնների ժողովածուի № 44-ում հրատարա-
կուած է արևմտեան իննը նահանդներում (Վիճոփ, Վիտերսկի,
Վոլնսկի, Գրոդնոփ, Կիեվի, Կովոփ, Մինսկի, Մոգիլյակի և

Պողոլսկի) մացնուելիք գեմատվային տնտեսութեան կառավարութեան կանոնադրութիւնը, որ Բարձրագոյն հաստատուած է ապրիլի 2-ին: Այդ նոր կանոնադրութեամբ յիշեալ նահանգներում զեմստվային տնտեսութեան կառավարութիւնը՝ համաձայն հանգուցեալ մինիստր Սիփեագինի ծրագրին՝ չի յանձնուելու տեղական արգաբնակութիւնից ընտրուած ներկայացուցիչներին (զեմստվօ), այլ մի մարմնի, որ կազմուած է լինելու տեղական պետական պաշտօնեաներից և պետական իշխանութեան կողմից ընտրուած ու նշանակուած ներկայացուցիչներից:

Մայիսի 16-ին մեծ շքով տօնուեց Ռուսաստանի հիւսիսային մայրաքաղաք Պետերբուրգի հիմնադրութեան 200-ամեակը:

Յայտնի են Պուշկինի խօսքերը, թէ «Մեծն Պետրոսը հիմնելով Պետերբուրգ՝ պատուհան բացեց գէպի Նորոպա»: Դրանուած ասուած է ամեն ինչ: Եւ արդարն, Ռուսիայի հին մայրաքաղաք Մոսկուան իր թաթարաբիւղանդական և հին ռուսական աւանդութիւններով ու կարգերով, իր ասիական դանդաղութեամբ և չինական ինքնահաւանութեամբ միայն խոչընդուռ կը լինէր մեծ վերանորոգչի առաջ: Նոր հիմնուած Պետերբուրգը չ'ունէր այդպիսի արագիցիաներ: Լրցւում էր նոր տարրերով, բիւրոկրատիայով, օտարազգիններով—մի խօսքով Պետրոսի ծրագրներին այսպէս թէ այնպէս նպաստող մարդկանցով: Պետերբուրգն իր աշխարհագրական զիրքով կարուած էր հին Ռուսաստանից և կպած Արևմտեան Եւրոպային, որի լուսաւորութիւնը և քաղաքացիական կարգերը ներս են խուժւում այդ «պատուհանով» Ռուսաստան:

Պետերբուրգի 200-ամեակը չնորհաւորելու նպատակով եկել էին Եւրոպական մայրաքաղաքներից և ներքին քաղաքներից ներկայացուցիչներ: Յաւերժացնելու համար Մեծն Պետրոսի անունը՝ Պետերբուրգի քաղաքային ինքնավարութիւնը հիմք դրեց նրա անունով մի գպրոցական տան չէնքի: